

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կ-290-23.09.2019-ՊԻ-011/0 օրենքի և «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կ-290¹-23.09.2019-ՊԻ-011/0 օրենքի նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկները

Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5
ՀՀ կառավարություն	Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2.-րդ մաս	Առաջարկվում է փոփոխել 172-րդ հոդվածի 3.2.-րդ մասում լրացվող պարբերությամբ նախատեսված հանցակազմերի ցանկը և նախատեսել հետևյալ հանցակազմերը. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104-րդ հոդված, 112-րդ հոդված, 125.1-րդ հոդված, 131-րդ հոդվածի 2-րդ մաս և 3-րդ մաս, 132-րդ հոդված, 132.2-րդ հոդված, 133-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասեր, 154.2 հոդված, 154.9 հոդված, 168-րդ հոդված, 178-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասեր, 179-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասեր, 180-րդ հոդվածի 3-րդ մաս, 181-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասեր, 182-րդ հոդված, 188-րդ հոդված, 188 ¹ -րդ հոդված, 189-րդ հոդված, 189.1-րդ հոդված, 190-րդ հոդված, 190.1-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասեր, 190.2-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասեր, 191-րդ հոդված, 192-րդ հոդված, 193-րդ հոդված, 194-րդ հոդված, 200-203-րդ հոդվածներ, 205-րդ հոդված, 207-րդ հոդված, 213-րդ հոդված, 214-րդ հոդված, 215.1-րդ հոդված, 216-րդ հոդվածի 3-րդ մաս, 217-րդ հոդված,	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			217.1-րդ հոդված, 218-րդ հոդված, 219-224-րդ հոդվածներ, 233-րդ հոդված, 235-րդ հոդված, 235.1-րդ հոդված, 261-րդ հոդված, 262-րդ հոդված, 266-րդ հոդված, 267.1-րդ հոդված, 274-րդ հոդված, 275-րդ հոդված, 308-րդ հոդված, 309-րդ հոդված, 310-314.3-րդ հոդված, 332-րդ հոդված, 336-րդ հոդված, 352-րդ հոդված, 375-րդ հոդված:		
	ՀՀ կառավարություն	Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2.-րդ մաս	<p>ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2.-ին մասում լրացվող պարբերությամբ նախատեսված հանցակազմերով հարուցված քրեական գործերով դատարանը պատճառաբանված որոշմամբ բավարարում է կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անծանց վերաբերյալ միայն բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու քննիչի՝ հսկող դատախազի համաձայնությամբ և գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի կողմից հաստատված միջնորդությունը: Առաջարկվում է լրացվող պարբերությամբ նախատեսել նաև «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ խուզարկելու և առգրավելու հնարավորությունը:</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Միաժամանակ, Նախագծի հիմնավորման մեջ ևս կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	Ընդունվել է:

	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2.-րդ մաս</p>	<p>ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2.-ին մասում լրացվող պարբերության համաձայն՝ դատարանի որոշման պատճենը քննիչը ոչ ուշ, քան քրեական գործը սույն օրենսգրքի 272-րդ հոդվածով սահմանված կարգով դատախազին ուղարկելուց 10 օր առաջ ուղարկում է կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված այն անձին, որի վերաբերյալ ստացվել են բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները: Մինչդեռ քննիչը օբյեկտիվորեն չի կարող հստակ կանխատեսել քրեական գործի նախաքննության ավարտման պահը: Առաջարկվում է փոփոխել այդ ժամկետը և նախատեսել, որ քննիչը դատարանի որոշման պատճենը պետք է ուղարկի կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված այն անձին, ում վերաբերյալ ստացվել են տեղեկությունները, ոչ ուշ, քան քրեական գործը սույն օրենսգրքի 272-րդ հոդվածով սահմանված կարգով դատախազին ուղարկելուց կամ քրեական գործի վարույթը սույն օրենսգրքի 261-րդ հոդվածով սահմանված կարգով կարճելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Միաժամանակ, Նախագծի հիմնավորման մեջ ևս կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>
	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մաս</p>	<p>Առաջարկվում է «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասից հանել «քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ» բառերը:</p>	<p>Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>